ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԿԱՆԱՉՈՒՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРАРАТСКИЙ МАРЗ
ГЮХАПЕТАРАН КАНАЧУТА

№ 024/74
14/12/2016թ.

գ.Կանաչուտ
Հեռ.(0235)6-00-76

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊՐ-Ն Ռ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Կից ներկայացվում է Կանաչուտ համայնքի ավագանու 2016 թվականի թիվ 10 նիստի թիվ 23,24,25 որոշումների կրկնօրինակները:
Առդիր՝ 7 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Լ. ԱՍԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՆԱՉՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Կանաչուտ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Կանաչուտ, 098460002 kanachutgp@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 23

ԱՎԱԳԱՆՈՒ 09 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 10 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի պահանջներով.

Հաստատել համայնքի ավագանու 2016թ.-ի թիվ 10 նիստի հետևյալ օրակարգը.

1. Տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին :
2. Գույքագրման արդյունքներն ամփոփելու մասին :

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԳԱԳԻԿ
2. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹԻԿ
3. ԵՓՐԵՄՅԱՆ ԺՈՒԴԵՔՍ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԾԱՌՈՒԿ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՐԱՏ
6. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ
7. ՇԱՀԻՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Լ.ԱՍԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՆԱՉՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Կանաչուտ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Կանաչուտ, 098460002kanachutgp@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 24

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով

Կանաչուտ համայնքի վարչական տարածքում 2017թ. համար սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի, շինությունների շինարարության թույլտվության համար տեղական տուրքը սահմանել.

Հիմնական օբյեկտների համար՝

1) մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգե գործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7500 դրամ,

2) սույն կետի ա)ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա) 201-500քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 15000 դրամ ,

բ) 501-1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 25000 դրամ,

գ)1001քմ -3000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝20000 դրամ.

դ) 3001-ից և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 35000 դրամ

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 դրամ

4) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման,

արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն 1500 դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարության, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության տեղական տուրքը սահմանվում է 2500 դրամ:

4.Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1.ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար յուրաքանչյուր եռամսյակի համար

ա/ մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինություններիներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2500 դրամ:

բ/26 մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000 դրամ

2. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա/ մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2500 դրամ:

բ/ 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 3000 դրամ:

5. Համայնքի տարածքում՝

ա/ Բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար -- 350դրամ 1 քմ համար

բ/ հեղուկ վառելիքի ,սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է - 150000 դրամ:

գ/ խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 30 000դրամ:

6.Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

հիմնական շինությունների ներսում

ա/մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար-5000 դրամ

բ/ 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար -7000 դրամ

գ/ 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար -8000 դրամ

դ/ 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար -10000 դրամ

ե/201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանոը մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար-15000 դրամ

զ/ 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար -25000 դրամ:

ոչ հիմնական շինությունների ներսում

ա/ մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար -1000 դրամ

բ/ 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար -2000 դրամ

գ/ 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար -3000 դրամ

դ/ 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար-5000 դրամ

ե/ 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար -8000 դրամ

զ/ 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար -12000 դրամ:

7.Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլատվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է.

ա/այլ արտաքին գովազդի համար-500դրամ

բ/ դատարկ գովազդային վահանակների համար-125 դրամ

1,2,3 կետերի համար կիրառված է 0.5 գործակից:

Համայնքի տարածքում տեղական վճարների դրույքաչափերը.

Համայնքի սահմաններում կարող են սահմանվել տեղական վճարների հետևյալ վճարները.

1. համայնքի տարածքում շինարարության կամ արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական շինարարության ավարտը փաստագրելու տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայության դիմաց հատուցման վճար՝ 1000 դրամ:

2. տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման մասնակիցներից վճար 500 դրամ:

3. համայնքում աղբահանություն կազմակերպելու համար յուրաքանչյուր բնակչի համար ամսական 5 դրամ:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԳԱԳԻԿ
2. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹԻԿ
3. ԵՓՐԵՄՅԱՆ ԺՈՒԴԵՔՍ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԾԱՌՈՒԿ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՐԱՏ
6. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ
7. ՇԱՀԻՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Լ.ԱՍԱՏՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՆԱՉՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Կանաչուտ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Կանաչուտ, 098460002 kanachutgp@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 25

ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԱՄՓՈՓԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ կետով՝

Հաստատել Կանաչուտ համայնքի 2016 թվականի գույքագրման արդյունքները և բոլոր ենթակառույցների գույքը թողնել հետագա գործունեության համար.

Մանկապարտեզ՝
1. Դաշնամուր-1հատ
2. Մահճակալ տումբա-8հատ
3. Կշեռք-1հատ
4. Ալյումինե պղինձ-3հատ
5. Սրբիչի կախիչ-2հատ
6. Մանկական սեղան-12հատ
7. Գրասեղան-1հատ
8. Սպիտակեղենի կոմպլեկտ-30հատ
9. Վերարկուների պահարան-2հատ

Մշակույթի տուն/գրադարան -1. Վարագույր/պատրաստի/4հատ
2. Բեմի վարագույր -1հատ
3. Քիվ-7հատ
4.Սեղան 1x173,25
5. Երկաթյա պահարան 10x88,55=885,50
6. Երկաթյա պահարան 16x184=2944
7. Երկաթյա պահարան 4x17,20=68,80
8. Գրականություն-6393կտոր
9.Դաշնամուր- 1հատ
10. Նստարան-25հատ

Գյուղապետարան
1. Համակարգիչ -2հատ
2. Մոնիտոր LG- 2հատ

3. Տպիչ- 1հատ
4. UPS-LHTEX-2հատ
5. Գրասեղան-6հատ
6. Սեղան-1հատ
7. Չհրկիզվող պահարան-5հատ
8. Կողասեղանիկ-2հատ
9. Աթոռներ- 6հատ
10.գրասեղան- 3 հատ
11.փափուկ կահույք -1 կոմպլեկտ
12.գրասենյակային աթոռ-1 հատ
13.աթոռ – 6 հատ
14.աթոռ- 12 հատ
15.շերտավարագույր- 18մ
16.հեռուստացույց Supra -1հատ
17. Էլ. տաք -4 հատ
18.փական-6 հատ
19.երկ. լար-4
20.վարդակ-8 հատ
21.ջահ-1

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԳԱԳԻԿ
2. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹԻԿ
3. ԵՓՐԵՄՅԱՆ ԺՈՒԴԵՔՍ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԾԱՌՈՒԿ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՐԱՏ
6. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ
7. ՇԱՀԻՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Լ.ԱՍԱՏՐՅԱՆ**